

ԽՈՐԵՆ ԹՈՒՋՅԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ՄԻՐՋՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԳԱՀԱՄԲԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Խ. Վ. ԹՈՒՋՅԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ՄԻՐՋՈՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ, 1970

78Ар2
Մ 76 բ

Хорен Вартанович Торджян

ГУРГЕН МИРЗОЯН

(На армянском языке)

Издательство «Айастан»
ЕРЕВАН 1970

Թոռչյան Խորեն Վարդանի

Գուրգեն Միրզոյան

Հրատ. խմբագիր՝ է. Ա. Մակարյան, գեղ. խմբագիր՝ Գ. Ա. Խոտիկյան, տեխ. խմբագիր՝ Գ. Ս. Բանդուրյան, վերստուգող սրբագրիչ՝ Գ. Գ. Դալլաքյան

Հանձնված է արտադրության 5/I 1970 թ.։Ստորագրված է տպագրության 16/IX 1970 թ.։ Թուղթ՝ տպագր. № 1 70×90 1/32, տպ. 1,87 մամ.=2,19 պայմ. մամ., հրատ. 1,3 մամ.։ Գինը՝ 12 կ.։ ՎՖ 07669։ Պատվեր 74։ Տիրաժ 1000։ «Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության № 2 տպարան, Երևան, Տերյան փող. № 105։

Յուբիլեանական արվեստագետի, հասարակական գործչի կյանքն իմաստավորվում է, երբ նրա գործունեությունն ի սպաս է դրվում ժողովրդական լայն զանգվածներին:

Պատահական չէ, որ հայ իրականության մեջ բացառիկ նշանակություն է տրվել մասսավիկներին: Մեր բոլոր մեծ ու փոքր ստեղծագործողներն ամենից առաջ եղել են մասսավիկներ, խմբավարներ, երգ ու երաժշտություն տարածողներ, երաժշտական լուսավորիչներ: Նրանք իրենց իսկ երաժշտական ստեղծագործությունների, երաժշտական դեմոկրատական գաղափարների կրքոտ տարածողն ու պրոպագանդողն են եղել: Այս առումով յուբիլեանական հայ կոմպոզիտորի, երաժշտական հասարակական գործչի գործունեությունը յուրահատուկ նշանակություն է ստանում հայ պրոֆեսիոնալ երաժշտության զարգացման առանձին փուլերում:

Մեր կոմպոզիտորները, սկսած Տիգրան Չուխաջյանից, Կարա-Մուրզայից, Կոմիտասից մինչև

Սպիրիդոն և Ռոմանոս Մելիքյաններն ու նրանց հետնորդները երաժշտական-մասսայական գործունեությանը տվել են առաջնակարգ նշանակություն, որպես պրոֆեսիոնալիզմի ամրապնդման, ազգային երաժշտական կուլտուրայի զարգացման հիմնական ազդակներից և նախապայմաններից մեկը: Բոլորն էլ իրենց ստեղծագործություններով նպաստել են ազգային ոճով ու ոգով ստեղծագործական դպրոցի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Երաժշտական արվեստի այդ կարգի գործիչների շարքին է պատկանում նաև կոմպոզիտոր-մանկավարժ Գուրգեն Հովհաննեսի (Վանոյի) Միրզոյանը, որի ամբողջ գործունեությունն ուղղված է եղել աճող սերնդի գեղարվեստական դաստիարակման, երաժշտական կուլտուրայի արմատավորման գործին: Այս գրույկի նպատակն է մասսայական ընթերցողներին հանրամատչելի ձևով ծանոթացնել նրա կյանքին, երաժշտական-հասարակական ստեղծագործական գործունեությանը: Այդ գործունեությունն ընդգրկում է մի ամբողջ հիսնամյակ:

ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Գուրգեն Հովհաննեսի (Վանոյի) Միրզոյանը ծնվել է 1891 թվականի մայիսի 20-ին (հին տոմարով) Թիֆլիսում, մանրավաճառի ընտանիքում։

Կոմպոզիտորի պապերից մեկը (մոր հայրը)՝ ճոն Սիմոնը, կաշեգործ էր, իսկ մյուս պապը՝ գինեգործ։

Կոմպոզիտորի հայրը փոքր հասակից աշխատել է երաժշտական գործիքների վերանորոգման արհեստանոցում, որպես աշակերտ։ Այստեղ նա սովորել է որոշ չափով նվագել և ծանոթացել է երաժշտական արվեստին, սիրել այն։ Բայց Վանոն առավել ձգտում ուներ դեպի թատերական արվեստը և մեծ հետաքրքրությամբ հետևում էր Հավլաբարի Արաքսյան թատրոնի ներկայացումներին։ Հաճախ հոգնաբեկ աշխատանքից հետո շտապում էր Արաքսյան թատրոն, չմանալով անգամ կհաջողվի՞ մուտք գործել թատրոն, ներկայացում դիտել։

Կոմպոզիտորի մայրը՝ Եկատերինան, վարժ նվագում էր հարմոն և, բնականաբար, ընկերական

ու ընտանեկան զբոսանքների, ուրախությունների ոգին էր։ Սակայն Եկատերինայի «արտիստական» գործունեությունն այդ հավաքույթների շրջանակով էլ սահմանափակվեց։ Մնողների հակումը դեպի արվեստն անհետևանք չի անցնում նրանց զավակների համար։ Վանոյի ու Եկատերինայի զավակներից երկուսը՝ Միքայելն ու Գուրգենը հետագայում դարձան մեր երաժշտական կուլտուրայի անխոնջ գործիչները։ Լուսիկը՝ կոմպոզիտորի քույրը, օժտված էր ձայնական տվյալներով և երաժշտական մասնագիտական կրթությունից անմասն չմնաց։

Ապագա կոմպոզիտորի ծնողների ապրած հասարակության մեջ իշխում էր հարստանալու անհագուրդ տենչը։ Դա անզուսպ, ամենակուլ կիրք էր, որը ոչնչացնում էր մարդկանց նվիրական ձգտումները։ Միրզոյանների ընտանիքի գլխավորը՝ Վանոն, պիտք է ակամա հրաժարվեր իր հակումներից, իշներ իրականության գիրկը։ Այդ էր թելադրում ինը հոգուց բաղկացած ընտանիքի հոգսը։ Ընտանիքի նյութական ապահովության, զավակների կրթության ու դաստիարակության մեծ ու պատասխանատու պարտականության գիտակցությունն ստիպում էր հրաժեշտ տալ հրապանքներին, զբաղվել մանրավաճառությամբ ու ընտանիքի համար ապրուստ հայթայթել։ Իր խառնըվածքով առուծախից հեռու մարդը մի օր էլ սնանկացավ։ Վանոյի առևտրական գործերի ձա-

խորհուրդ տրվեց զավակներին վաղ հասակից ճաշակել ինքնուրույն և ազնիվ աշխատանքի դառնությունն ու քաղցրությունը։

Արվեստն այնպիսի շռայլություն էր, որ միայն մեծատան զավակներին էր մատչելի։ Եվ հասկանալի է, որ Վանոն զավակների երաժշտական պրոֆեսիոնալ կրթության հարցը չկարողացավ լուծել։

9 տարեկան հասակում Գուրգենն ընդունվում է քաղաքի հանրակրթական դպրոցը, իսկ 1905 թվականից իր եղբոր՝ Միքայել Միրզոյանի խորհրդով հաղնում է գիմնազիան ու փոխադրվում Ներսիսյան դպրոց, որտեղ պատշաճ ուշադրություն էր հատկացվում նաև երաժշտական կրթությանը։

Ներսիսյան դպրոցը, ինչպես նաև Գևորգյան Հիմարանը բացառիկ դեր են խաղացել աշակերտության երաժշտական ունակությունների բացահայտման, տեսական ու գործնական գիտելիքներ հաղորդելու և դեպի երաժշտական պրոֆեսիոնալ կրթությունը հետաքրքրություն զարթեցնելու գործում։ Նրանք իրենց անշահախնդիր, անձնվեր գործունեությամբ վարակիչ օրինակ էին երիտասարդ սերնդի համար։ Այս դպրոցում են դասավանդել նշանավոր կոմպոզիտորներ, տեսաբաններ, խմբավարներ և կատարողներ, որոնցից մի քանիսն իրենց կրթությունն ստացել էին ռուսական ու եվրոպական երաժշտական խոշոր կենտրոններում։

Նրանք դաստիարակվել էին ժամանակի առաջավոր գաղափարներով, որոնցով և առաջնորդվում էին դասավանդման ընթացքում։

Այդ կարգի գործիչներից էր նաև կոմպոզիտոր խմբավար Գրիգոր Սյունին (Միրզոյանը), որը 1905-ից մինչև 1908 թվականները պաշտոնավարել է Ներսիսյան դպրոցում, որպես երգերաժշտության ուսուցիչ։

Պատանի Գուրգենը երաժշտական առաջին տպավորություններն ու նախնական գիտելիքներն ստանում է Գրիգոր Սյունուց։ Սյունու ազդեցությունը բախտորոշ է դառնում Միրզոյանի հետագա պրոֆեսիոնալ կրթության և մասնագիտության ընտրության գործում։ Ինչպես երաժշտական մյուս գործիչների, այնպես և Սյունու խմբի համերգները մեծապես նպաստում էին աշակերտների ունակությունների հայտնաբերմանը և համակողմանի զարգացմանը։ Բացի Սյունուց, Գուրգեն Միրզոյանի երաժշտական հակումների, ինչպես նաև գեղագիտական ճաշակի զարգացման գործում նշանակալից դեր խաղաց կուլտուրական և գեղարվեստական այն ընդհանուր մթնոլորտը, որ տիրում էր դպրոցում։

Գոյություն ուներ երաժշտական մի այլ ոլորտ՝ ժողովրդի կենցաղային, ծիսական երաժշտությունը, գուսանների, թափառաշրջիկ երաժիշտների, վառ ու ինքնատիպ, կենսահաստատ արվեստը։

Այդ արվեստը նշանակալից դեր է խաղացել պրոֆեսիոնալ ստեղծագործողների անհատականության և ոճական առանձնահատկությունների ձևավորման գործում։ Կուլտուրական ու գեղարվեստական զարգացման նման բարենպաստ պայմաններում ամրապնդվում և խորանում է պատանի Գուրգենի սերը դեպի երաժշտությունը։

1907—1908 թվականների ուսումնական տարում Գուրգեն Միրզոյանի կյանքում երեք նշանակալից դեպք է տեղի ունենում։ Ներսիսյան դպրոցի երգ-երաժշտության ուսուցիչ է հրավիրվում համաեվրոպական համբավ վաստակած վիրտուոզ ջութակահար Դավիթ Դավիթյանը, որն իր արվեստով կախարդում ու գերում էր ունկնդիրներին։ Այդ նույն թվականին Գուրգենին բախտ է վիճակվում երգել Կոմիտասի երգեցիկ խմբում։ 1903 թվականին տեղի ունենալիք հոգևոր համերգների մրցանակաբաշխությանը մասնակցելու համար Ներսիսյան դպրոցի հոգաբարձությունը անհրաժեշտ համարեց Կոմիտասին հրավիրել էջմիածնից և խմբի ղեկավարությունը հանձնել նրան։ Հայտնի է, որ հոգևոր համերգում Ներսիսյան դպրոցի խումբը Կոմիտասի գլխավորությամբ փայլուն և շունդալից հաջողության հասավ։ Այդ նույն թվականին Գուրգենը եղբոր՝ Միքայել Միրզոյանի խորհրդով ընդունվում է Թիֆլիսի երաժշտական դպրոցն ու մեկընդմիշտ իրեն նվիրում երաժշտական արվեստին։

Առաջին իսկ քայլերից Գուրգենն աշխատում է մասնակից լինել մեր երաժշտական կուլտուրայի ընդհանուր վերելքին, երաժշտական արվեստ-ային մասսաների սեփականությունը դարձնելու, նրանց գեղագիտական ճաշակը դաստիարակելու և զարգացնելու գործին։ Դեռևս չորրորդ դասարանում Ներսիսյան դպրոցի տեսուչ (1909—1912 թթ.) Խնունցի հանձնարարությամբ կանանց կարի ու ձևի դպրոցում երգ-երաժշտություն է պարապում։ Թիֆլիսի երաժշտական դպրոցում ուսումնառության տարինները պատանի երաժշտի համար վճռական էին։ Այստեղ սովորողների առաջ բացվում էր նոր, թերևս մինչ այդ անծանոթ մի աշխարհ, երաժշտական նոր կերպարներ՝ բուռն ու փոթորկալից, վերապաց ու գերող, խոհական ու իմաստալից, երբեմն մանկան աչիկների նման ջինջ ու պայծառ, երբեմն էլ հոգեկան խռովքներով լի։ Մոցարտ, Հայդն, Հենդել, Բեթհովեն և այլ նվիրական անուններ, որոնք իրենց ստեղծագործություններում բացահայտում էին մարդկային ամենանվիրական զգացումներն ու խոհերը։ Գուրգենի երաժշտական ընկալումները հարստանում էին ազգային նվիրական մասունքների վրա գումարվում էր ռուսականը, եվրոպականը, համաշխարհայինը։ Նրա երաժշտական տպավորությունների հարստացմանը մեծապես նպաստում են ուսումնարանի դիրեկտոր, սիմֆոնիկ նվագախմբի ղեկավար Նիկոլաևի սիմֆոնիկ

ու դաշնամուրային համերգները, որոնք սովորողների համար ձրի էին և պարտադիր։ Այդ համերգներն իսկական հայտնագործություններ էին սկսնակ երաժշտի համար։ Նա երաժշտության տեսությունն անցնում էր Զախարի Պետրովիչ Փալիաշվիլու (Պալիևի), իսկ հարմոնիան և էնցիկլոպեդիան՝ Նիկոլաևի մոտ։

1912 թվականի գարնանը Գուրգենը ավարտում է ուսումնառությունն ու նետվում կյանքի հորձանուտը։ Այդ անողոք պայքարում Գուրգենին մի նվիրական զգացում է առաջնորդում. իր ուսուցիչների ազնիվ ու մարդասիրական օրինակին հետամուտ՝ ողջ կյանքը նվիրել մանուկների կրթությանը։

Գուրգեն Միրզոյանի գործունեության առաջին հանգրվանը Տաշքենդն էր։ Տեղի ծխական դպրոցում 1912—1913 թթ. ուսումնական տարում նա երգ-երաժշտության ու հանրակրթական առարկաների դասատու էր։ Միաժամանակ նա ղեկավարում էր հայկական եկեղեցու երգեցիկ խումբը։

Ավարտվում է առաջին ուսումնական տարին։ Հայրենական տան ու հարազատների կարոտը նրան տանում է Թիֆլիս։ Ամառային արձակուրդներն անց է կացնում հայրենի հարկի տակ։ Այնուհետև հարազատներին, կուլտուրական կենտրոններին ավելի մոտիկ լինելու, մեծ քաղաքների հևքը զգալու պատճառով չի ուզում վերադառնալ հեռավոր Տաշքենդ։ Սակայն անհանգիստ խառ-

նըվածքի տեր երիտասարդի համար, որպիսին Գուրգենն էր, անհրաժեշտ էր նոր և անծանոթ միջավայր, թարմ տպավորություններ։

1913—1918 թվականներին նա աշխատում է Բաքվի հայկական ու ադրբեջանական դպրոցներում, որպես երգ-երաժշտության ուսուցիչ։ Այդ թվականներին Բաքվի քաղաքային դումայի ուսուցչական կոմիտեի նախագահը հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանն էր, որի օգնությամբ Գուրգեն Միրզոյանին հաջողվում է տեղավորվել քաղաքի լավագույն դպրոցներից մեկում։ Երիտասարդ երաժշտի առաջին հովանավորողն ու նրան որպես ստեղծագործողի քաջալերողը նույնպես Հովհաննիսյանն էր։

Հովհաննես Հովհաննիսյանն է Գուրգեն Միրզոյանի ադրբեջանական մանկական երգերի հրատարակման նախաձեռնողը։ Ի դեպ, այդ երգերը երիտասարդ երաժշտի առաջին ստեղծագործություններն էին։

Գուրգեն Միրզոյանի երգերի առաջին գնահատողներն իր սաներն էին, որոնց անմիջականորեն հասցեագրված էին այդ երգերը։ Վերջիններս իրենց առույգ, կենսահաստատ տրամադրությամբ ու ցայտուն մեղեդայնությամբ գրավեցին երեխաների սերը։ Մինչև օրս էլ այդ երգերն ապրում են ադրբեջանական դպրոցականների մեջ, որպես անանուն հեղինակի ժողովրդական ստեղծագործություններ։

Մուսաֆաթիստների ու դաշնակցականների ստեղծած խիստ ազգայնական և քաղաքական լարված մթնոլորտում հայերի կյանքը վտանգի տակ էր։ Այդ իսկ պատճառով Գուրգեն Միրզոյանը ստիպված էր Բաքվից հեռանալ։ Այնուհետև Գուրգեն Միրզոյանին հանդիպում ենք Թելավում, որտեղ հայկական գիմնազիայում ուսմասվար է ու երգեցիկ խմբի ղեկավար։ Հաջորդ՝ 1919—20 ուսումնական տարում, հրավիրվում է Թիֆլիսի Շամխորեցոց դպրոց որպես մաթեմատիկայի և երգ-երաժշտության ավագ ուսուցիչ։ Անգամ մաթեմատիկա դասավանդելիս Գուրգեն Միրզոյանը հետամուտ էր դպրոցականների գեղագիտական դաստիարակության, զգացումների ազնվացման, նրանց մոտ գեղեցկի զարգացման վեհ ու շնորհակալ գործին։

1920 թվականին, մենշևիկների օրոք, Թիֆլիսում գործում էր Խորհրդային Ռուսաստանի միսիան՝ Սերգեյ Միրոնովիչ Կիրովի գլխավորությամբ։ Խորհրդային դեսպանատանը աշխատում էր Գուրգեն Միրզոյանի կնոջ եղբայրը՝ Մնացական Սաֆարյանը։ Վերջինիս առաջարկությամբ Գուրգեն Միրզոյանը դեսպանատան աշխատակիցներից կազմակերպում է քառաձայն երգեցիկ խումբ։ Խումբը համերգներով հանդես է գալիս Ռուսաստանում՝ խորհրդային իշխանության հաստատման երկրորդ տարելիցին։ Այդ համերգի ծրագիրը բացառապես բաղկացած էր հեղափոխա-

կան երգերից։ Այս փաստը ցույց է տալիս երիտասարդ երաժշտի դեմոկրատական հայացքների որոշակիությունը։ Սակայն նրան վիճակված չէր երկար աշխատել դեսպանատանը։ Նա ստիպված էր ընդհատել մանկավարժական ու խմբավարական գործունեությունը։ 1920 թվականին Միրզոյանը կանչվում է մենշևիկյան բանակ՝ զինվորական ծառայության։

Մենշևիկյան Վրաստանում հայերի՝ մասնավորապես եկվորների շուրջը նույնպես անվստահության և թշնամանքի մթնոլորտ էր ստեղծված, որն արտահայտվեց բռնության, կամայականության ակտերով և աքսորով։ Մենշևիկյան բանակում գտնվող հայ զինվորներին զինաթափեցին ու աքսորեցին Քութայիսի, որոնց թվում էր և Գուրգեն Միրզոյանը։ Նա աքսորավայրից վերադարձավ միայն խորհրդային կարգերը հաստատվելուց հետո և լծվեց իր սիրած մանկավարժական աշխատանքին։ Սկզբնական շրջանում ծխախոտի գործարանի բանվոր-բանվորուհիներից երգեցիկ խումբ է կազմում և համերգներով հանդես գալիս բանվորական ակումբներում։ Այս խմբի համար գրում է մի քանի երգ, որոնցից է՝ «Դղեակ փիրվելի մայիս» («Մեկը մայիսի»), որը հայ առաջին հեղափոխական երգերից մեկն է՝ գրված վրացերեն լեզվով։

Խմբավարական, ինչպես և մանկավարժական ոգեշունչ ու եռանդուն աշխատանքի ընթացքում

Գուրգեն Միրզոյանին հանգիստ չէր տալիս երաժշտական կրթությունը շարունակելու գաղափարը։ Միրզոյանը ձգտում էր խորացնել իր կրթության թերին։ Թեև մինչ խորհրդային կարգերի հաստատումը այդ հնարավոր չէր, ապա խորհրդային կարգերի հաստատումից հետո նա այնուամենայնիվ շարունակեց իր ուսումը։

1920 թվականին աքսորավայրից վերադառնալուց հետո Գուրգեն Միրզոյանը նախապատրաստվում է կոնսերվատորիայի ընդունելության քննությունների։ Մասնավոր դասեր է վերցնում Քրիստափոր Քուշնարյանից, որի մոտ սովորում է հարմոնիա և կոնտրապունկտ։ Հաջորդ՝ 1921 թվականին, հաջողությամբ հանձնում է քննությունները և ընդունվում Թիֆլիսի կոնսերվատորիայի տեսական բաժինը։

Խորհրդային կարգերի հաստատման համար պայքարի տարիները գաղափարական լարված ու ահեղ բախումների ժամանակաշրջան էին։ Յուրաքանչյուր ազնիվ երիտասարդ ստեղծագործող աշխատում էր լինել իր ժամանակի հույզերի և գաղափարների արտահայտիչը։ Հին գաղափարների ժխտումն ու նորի հաստատումը արվեստի առաջընթացի, նրա գաղափարական-գեղարվեստական արտահայտչական միջոցների հարստացման հզոր ազդակ էր։

Անխուսափելիորեն անցման շրջանի արվեստի

երկերը տառապել են սխեմատիզմով, պլակատայնությամբ, անկատարելությամբ։

Հաղթանակող պրոլետարիատի հեղափոխական գաղափարների արմատավորումը, մարդկանց գիտակցությունից հնի բնաջնջումը ամենօրյա համառ ու հետևողական աշխատանք էր պահանջում։ Պրոլետարական հեղափոխությունը արմատականորեն փոխեց պատմա-հասարակական հարաբերությունները և մեծ ներգործություն ունեցավ մարդկանց գիտակցական աշխարհի վրա։ Բնական է, որ այս փոփոխություններն ավելի խորն ազդեցին երիտասարդ ստեղծագործողների աշխարհայացքի ձևավորման վրա։

Գուրգեն Մխրզոյանն այն աշխատավոր մտավորականներից էր, որոնք առանց երկմտելու իրենց ունակություններն ի սպաս դրին նոր կյանքի, նոր գաղափարների արմատավորման և տարածման գործին։ Դրա լավագույն ապացույցը խորհրդայնացման առաջին տարիներին նրա երաժշտական-հասարակական, մանկավարժական և ստեղծագործական գործունեությունն է։ Նա խորհրդային երիտասարդ երաժշտական արվեստի առաջին ստեղծողներից մեկն է։

Ուսումնառության ընթացքում վերջնականապես ձևավորվում են Գ. Մխրզոյանի գեղագիտական ըմբռնումները։ Այդ գործում անկասկած խոշոր դեր խաղացին այնպիսի նշանավոր մանկավարժ-ստեղծագործողներ, որպիսիք էին Միխայիլ

Իպոլիտով-Իվանովը, Դիմիտրի Արակիշվիլին, Քրիստափոր Քուշնարյանը։ Մանկավարժներ, որոնք հանդիսացել են ժողովրդա-իրապաշտական դպրոցի շերմ պաշտպաններն ու հետևորդները և այդ սկզբունքները ոչ միայն պրոպագանդել, այլև հետևողական կերպով կիրառել են իրենց ստեղծագործություններում։ Իպոլիտով-Իվանովի մոտ Միրզոյանն ուսումնասիրում է ձևերի վերլուծություն և կոմպոզիցիա, Արակիշվիլու մոտ՝ երաժշտության պատմություն, իսկ Քուշնարյանի մոտ՝ պոլիֆոնիա։

1924 թվականի գարնանը Միրզոյանն ավարտում է Թիֆլիսի պետական կոնսերվատորիան՝ ստացած արվեստագետի վկայականով։

1924 թվականին Գ. Միրզոյանը հրավիրվում է Անդրկովկասի կոմունիստական համալսարան որպես խմբավար։ Գուրգեն Միրզոյանի այդ շրջանի անձնվեր աշխատանքի արդյունքն է չորս տարբեր խմբերի (հայկական, վրացական, ռուսական և ադրբեջանական) կազմակերպումը։ Այս խմբերի երգացանկը կազմված էր գլխավորապես հեղափոխական և ժողովրդական երգերից։ Երգացանկում զետեղված ստեղծագործությունների զգալի մասը պատկանում էր Գուրգեն Միրզոյանի գրչին (մշակումներ և ինքնուրույն գործեր)։ Հիշյալ խմբերի համար գրված երգերից հիշատակելի է վրացական «Մշեղելնի» («Դարբիններ», խոսք՝ Կիսիանու), «Պեսնյա կուզնեցով» («Դարբինների

երգը», խոսք՝ Ռիքացկու), «Բեյուկ ադ» («Մեծ հայր», խոսք՝ Ռասուլ Ռզայի) և այլ երգեր։ Այս երգերը հեղինակի կողմից վերախմբագրվել են 1939 թ.։ Կոմունիստական համալսարանում նրա աշխատանքն ընդամենը մեկ տարի տևեց։ Բայց որքան եռանդ, ճիգ ու ջանք էր գործադրվել չորս տարբեր խմբեր տարբեր լեզուներով մարզելու, ինչպես նաև երգացանկ պատրաստելու համար։

Անդրկովկասի կոմունիստական համալսարանի աշխատանքային կարճատև ժամանակաշրջանը մեծ նշանակություն ունեցավ կոմպոզիտորի ընդհանուր աշխարհայացքի և ինտերնացիոնալ գաղափարների ու համոզմունքների ամրապնդման գործում, որով պայմանավորված էր կոմպոզիտորի երաժշտական-հասարակական, մանկավարժական և խմբավարական հետագա գործունեության գաղափարական ու գեղարվեստական ուղղությունը։

1924—25 ուսումնական տարում Գուրգեն Միրզոյանը Երևանի պետական կոնսերվատորիայում աշխատելու հրավեր է ստանում որպես տեսական առարկաների դասախոս։ Այդ հրավերը նա մեծ ոգևորությամբ է ընդունում, բայց աշխատել այդպես էլ չի հաջողվում, որովհետև կոնսերվատորիայի դիրեկցիան համապատասխան հաստիքային միավորի հարցը նախօրոք չէր համաձայնեցրել լուսավորության ժողովրդական կոմիսարիատի հետ։

Այդ մասին իմանում է մեծանուն կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանը։ Զգայուն ու մարդասեր կոմպոզիտորը շտապում է մի սիրալիր երկտողով մեղմացնել Միրզոյանի ծանր հոգեվիճակը.

«Թանկագին Գուրգեն Իվանիչ.

Ինձ հաղորդեցին պետական կոնսերվատորիայից Ձեզ ազատելու հրամանի մասին, որն ինձ խորապես վշտացրեց։

Երաժշտական-մանկավարժական կադրերով մենք այնքան էլ հարուստ չենք։ Հետևաբար խիստ ցավալի է, որ կոնսերվատորիան ի դեմս Ձեզ կորցնում է արժեքավոր աշխատողներից մեկին։

Հաղորդելով Ձեզ իմ բարեկամական համակրանքը, միաժամանակ հույս եմ հայտնում, որ Ձեզ պատճառված անախորժությունը ժամանակավոր երևույթ է և վաղ թե ուշ Դուք դարձյալ կգրավեք Ձեր արժանավայել տեղը կոնսերվատորիայի դասատուների շարքում։

Ձեզ անկեղծորեն սիրող՝ Ա. Սպենդիարյան»։

Միրզոյանն անցավ այլ աշխատանքի։

Երիտասարդ երաժիշտ-մանկավարժական կադրերի պատրաստումն այն ժամանակ և այժմ էլ կուլտուր-լուսավորական կարևորագույն հարցերից մեկն է, որը միշտ կոմունիստական կուսակցության և խորհրդային կառավարության ուշադրության կենտրոնում է եղել։ Գուրգեն Միրզոյանը

խորապես գիտակցելով այդ, նվիրվում է մանկավարժական կադրերի պատրաստման գործին։

1925—26 ուսումնական տարում Գուրգեն Միրզոյանն աշխատում է Երևանի հայկական մանկավարժական տեխնիկումում։ Երկու տարի մանկավարժական տեխնիկումում աշխատելուց հետո, կենցաղային անբարենպաստ պայմանների հետևանքով, ստիպված էր թողնել Երևանն ու վերադառնալ Թիֆլիս՝ իր ընտանիքի մոտ։

Անդրկովկասի երեք հանրապետություններից Ադրբեջանն ամենից ավելի էր զգում հրիտասարդ երաժիշտների պահանջը։ Հայաստանում և Վրաստանում երաժշտական պրոֆեսիոնալիզմն ուներ իր վաղեմի ավանդությունները։

Ադրբեջանում պրոֆեսիոնալ երաժշտությունն սկզբնավորվում է 20—30-ական թվականներին։ Այդ գործում մեծ ծառայություն մատուցեցին նաև հայ երաժիշտները։ Ջափարանց նշանակալից է Անտոն Մայիլյանի գործունեությունը, որն սկիզբ է առնում դեռ նախահեղափոխական տարիներից և հարատևում մինչև կյանքի վերջը։ Նրա ստեղծագործական դիապազոնը ծավալվում էր մանկական երգից մինչև օպերա։ Ադրբեջանական երաժշտական կուլտուրայի զարգացման գործում չափազանց նշանակալից է Անուշավան Տեր-Ղեվոնդյանի և բժիշկ Հովհաննիսյանի դերը։

Հիշատակելի է Անուշավան Տեր-Ղևոնդյանի «Կրակե հարսնացու» բալետը, որը գրվել է Բաքվի օպերային թատրոնի համար։ Իսկ բժիշկ Հովհաննիսյանը հանդիսանում է ժողովրդական երաժշտական գործիքներից կազմված նվագախմբի հիմնադիր ղեկավարը։

1927—1931 թվականներին Գուրգեն Միրզոյանը հրավիրվում է Գյանջայի (Կիրովաբադ) նորաստեղծ երաժշտական տեխնիկում՝ դիրեկտորի պաշտոնով։

Կիրովաբադում նա չի սահմանափակվում միայն տեխնիկումի աշխատանքներով։ Հայ և ադրբեջանցի երևխաների համար կազմակերպում է համերգներ, բեմադրում մանկական օպերաներ, իր վրա վերցնելով կազմակերպչական, բեմադրական, գեղարվեստական-կատարողական աշխատանքների հոգսը։ Համախ երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործությունների բեմականացման և պրոպագանդման նախաձեռնությունը նույնպես նրան է պատկանում։ Հիշենք թեկուզ կոմպոզիտոր Մարտին Մազմանյանի (այժմ՝ Հանրապետության ժողովրդական արտիստ) մանկական օպերայի («Ճուտիկ»-ի) առաջին բեմադրությունը Գյանջայում, որն իրականացվել է Գուրգեն Միրզոյանի ջանքերով և անմիջական մասնակցությամբ։ Նա անսահման շահագրգռվածություն է հանդես բերում իր գրչակից ընկերների ստեղծագործությունների, ինչպես նաև ազգային հոգևոր

կուլտուրայի արժեքավոր երկերի ժողովրդականացման դժվարին ու շնորհակալ գործի նկատմամբ։

Գուրգեն Միրզոյանի երաժշտական-հասարակական գործունեության գլխավոր առանձնահատկություններից մեկը հարգանքն է դեպի հարևան ժողովուրդների կուլտուրան։ Սրանով պետք է բացատրել, որ նրա գրած հայկական երգերի կողքին գոյություն ունեն վրացական և ադրբեջանական երգեր, որոնք ժամանակին լայն տարածում են գտել։

Դեկտեմբերները Գուրգեն Միրզոյանի համար մեծ նշանակություն ունեին նաև կյանքի ճանաչողության, երաժշտական մտապատկերների հարըստացման, ժողովրդական ստեղծագործության ակունքների ճանաչման տեսակետից, որը յուրաքանչյուր ստեղծագործողին հարստացնում է հոգեպես ու անքակտելիորեն կապում ժողովրդի հետ, դարձնելով նրան իր ժամանակի ժողովրդական ապրումների ու առաջատար գաղափարների արտահայտիչը։

1932 թվականին Գուրգեն Միրզոյանը հրավիրվում է Լենինական և նշանակվում երաժշտական բանֆակի ուսմասվար։ Շիրակի հարթավայրը երգի, ինքնաբուխ տաղանդների, ժողովրդական ինքնատիպ ստեղծագործության անօրինակ գանձարան է, որով ոգեշնչվել ու սնվել են հայ քնարերգության, երաժշտության ու արվեստի նշանա-

վոր վարպետներ։ Գուրգեն Միրզոյանն էլ հմայվեց ժողովրդական պարզ ու անպաճույճ արվեստով՝ քառաձայն երգչախմբի համար մշակելով մեր անմահ քնարերգուի՝ Ավետիք Իսահակյանի «Սիրեցի, չարս տարան», ժողովրդական «Ո՞ւր ես, չար ջան», «Արփա չայի քյանարը» և այլ երգեր։

1935 թվականի սեպտեմբեր ամսից Գ. Միրզոյանն աշխատում է Թիֆլիսում։ Այստեղ նրան բաժին է ընկնում մի հաճելի ու պատվավոր պարտականություն՝ 26 կոմիսարների շրջանում նախաձեռնել տաններորդ երաժշտական դպրոցի հիմնադրման և ղեկավարման գործը։ Միաժամանակ նա աշխատում է Շահումյանի անվան պետական դրամատիկական թատրոնում։ Սկզբնական շրջանում դպրոցը գործում էր տնտեսական հաշվարկային սկզբունքով, իսկ մի տարի անց այն ձևակերպվում է որպես պետական ուսումնական հաստատություն։ Կազմակերպչական շրջանի առաջին հոգսերը, վազվզուկը հիմնարկից-հիմնարկ, կայուն և որակյալ ուսուցչական կոլեկտիվի ստեղծումը, դպրոցական գույքի, գործիքների և նյութական միջոցների հայթայթումը, որն աշխատանքի անհրաժեշտ և նորմալ պայմանների ստեղծման գրավականն է, ծանրացել էր Գուրգեն Միրզոյանի ուսերին։ Երեք տարվա համառ, տքնաջան աշխատանքից հետո, երբ № 10 երաժշտական դպրոցի ակադեմիական կյանքն ընթանում էր նորմալ հունով, Գուրգեն Միրզոյանը

թողնում է իր հիմնադրած ու գլխավորած ուսումնական հաստատությունը, գալիս է Լենինական և աշխատում երաժշտական տեխնիկումում ուսումնական մասի վարիչի, տեսական առարկանների դասատուի և Մոսկվայնի անվան երկրորդ պետական թատրոնի նվագախմբիղեկավարի պաշտոնով։

Գուրգեն Միրզոյանը հատուկ ուշադրություն է դարձնում ուսումնա-ակադեմիական աշխատանքի բարելավմանը։ Մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներին զուգընթաց ձեռնամուխ է լինում սիմֆոնիկ նվագախմբի կազմակերպմանը։ Նվագախումբը Միրզոյանի ղեկավարությամբ մի շարք ելույթներով հանդես է գալիս ֆիլհարմոնիայի համերգային դահլիճում։ Հետաքրքիր է 1936 թվականի հունվարի 18-ին տեղի ունեցած հրապարակային ելույթը, որտեղ կատարվել են ներքոհիշյալ ստեղծագործությունները.

1. Բեթհովեն— 5-րդ սիմֆոնիա,
2. Ա. Սպենդիարյան— Երևանյան էսյուդներ,
3. Զ. Պալիաշվիլի— նախերգանք «Դաիսի» օպերայից,
4. Ս. Բարխուդարյան— «Ակվարել»,
5. Ա. Տեր-Ղևոնդյան— «Շիրակի էսքիզներ»,
6. Գ. Միրզոյան— «Էսքիզ»։

Ներկայացված հայտագիրը վկայում է, որ Գուրգեն Միրզոյանը ունկնդիրների գեղագիտա-

կան ճաշակի դաստիարակման ու երաժշտական մտահորիզոնի ընդլայնման համար դիմել է ինչպես ազգային, այնպես էլ համաշխարհային, դասական երաժշտության լավագույն գործերին։ Յավով պետք է նշել սակայն, որ Գուրգեն Միրզոյանի գործունեությունը լենինականում, ինչպես նաև սիմֆոնիկ գրականության մասսայականացման ասպարեզում խիստ կարճատև եղավ։ Անշուշտ, սիմֆոնիկ նվագախմբին դիմելու փաստը չէր կարող իր բարերար ազդեցությունը չթողնել նրա հետագա ստեղծագործական ու կատարողական գործունեության վրա։

1936—1937 թթ. թատերաշրջանում Միրզոյանը Երևանի Գաբրիել Սունդուկյանի անվան պետական թատրոնի դիրեկցիայից հրավեր է ստանում աշխատելու որպես երաժշտական մասի վեկավար և նվագավար։ Իսկ հաջորդ երկու տարիների ընթացքում գլխավորում է Հայաստանի ֆիլհարմոնիայի նորաստեղծ ժողովրդական գործիքների նվագախումբը՝ որպես գեղարվեստական մասի վարիչ և նվագավար։ Նախորդ տարիներին Թիֆլիսի Շահումյանի անվան, Լենինականի Մռավյանի անվան և Երևանի Գաբրիել Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոններում նվագախմբեր վեկավարելը Գուրգեն Միրզոյանին նվագավարական արվեստի պրակտիկ գիտելիքներ է տալիս։ Միրզոյանը կարողացավ ժողովրդական գործիքների նվագախումբը կատարելագործել, դարձ-

նել բազմաձայն, մոտեցնել սիմֆոնիկ նվագախմբի հնչեղությանը։ Այդպիսի մի փորձ արել էր Վարդան Բունին, բայց նրա գործունեությունը կարճատև եղավ։

1939 թվականին Մոսկվայում կայացած հայ արվեստի տասնօրյակին մայրաքաղաքի թերթերը գովաբանեցին ինչպես նվագախմբի կատարողական արվեստը, այնպես էլ Գ. Միրզոյանի արտիստական ձիրքն ու կատարած երկերի հմուտ գործիքավորումը։ Երկու տարվա ստեղծագործական լարված աշխատանքը տվեց իր արդյունքը։

«Լենինգրադսկայա պրավդայի» 1939 թվականի սեպտեմբերի 11-ի համարում կոմպոզիտոր Ժելոբինսկին գրում է. «Ունկնդիրների վրա ուժեղ տպավորություն է թողնում ժողովրդական գործիքների նվագախումբը նվագավար, կոմպոզիտոր, շքանշանակիր Գուրգեն Միրզոյանի ղեկավարությամբ։

Մեծագույն ուշադրության է արժանի ժողովրդական գործիքների նվագախմբի տեխնիկան եվրոպական սիմֆոնիկ նվագախմբի մակարդակին բարձրացնելու նրա ձգտումը։

Շքանշանակիր, հանրապետության ժողովրդական արտիստ Նիկողայոս Տիգրանյանի «Հեյդարի» երաժշտության ազգային կոլորիտը փայլուն կերպով զուգակցված է եվրոպական երաժշտության բարձր տեխնիկայի հետ։ Կոմպոզիտորը հասել է

էֆեկտիվ հնչեղության իր ինքնատիպ, գունեղ ներդաշնակության, նվագախմբային հուժկու հնչեղության։ Ամենազարմանալին այն է, որ նվագախումբն այդ մեծ արդյունքին հասել է ժողովրդական գործիքների սահմանափակ և ձայնածավալի նեղ շրջանակում։ Նվագախմբի կատարած լավագույն գործերից է շքանշանակիր կոմպոզիտոր Սարգիս Բարխուդարյանի «Էսքիզը»։

«Սովետսկոյե իսկուստվո»-ի թղթակից Գ. Բոգդանովը կանգ առնելով ժողովրդական գործիքների անսամբլի կատարողական առանձնահատկությունների վրա, գրում է .«Ժողովրդական երաժշտության բացահայտման ասպարեզում բոլոր անսամբլների հիմքում զգացվում է կենդանի, ստեղծագործական մոտեցում։

Առաջադրված ստեղծագործական խնդիրների լուծման ասպարեզում հետք անգամ չկա թանգարանային մոտեցման։ Այդ տեսակետից չափազանց հետաքրքիր է ժողովրդական գործիքների նվագախմբի գործունեությունը (Գ. Միրզոյանի ղեկավարությամբ)։ Դա մի բազմաձայն նվագախումբ է, պոլիֆոնիկ պարտիտուրայով։ Նրա կատարողական գույները խիստ դիֆերենցված են, և ամենակարևորն այն է, որ գույների փոփոխության ժամանակ շատ հաճախ բացահայտվում են անսպասելիորեն նոր երանգներ, որը մեր կոմպոզիտորներին շատ բան կարող է ուսուցանել։ Այդ երանգներն ընդունակ են թարմացնելու, հարըս-

տացնելու սովետական սիմֆոնիկ նվագախմբի երանգները»[1]։

Գուրգեն Միրզոյանը երկու տարվա ընթացքում մեծ աշխատանք կատարեց ժողովրդական գործիքների երգացանկի ստեղծման ասպարեզում, ինչպես ինքնուրույն, այնպես էլ այդ հեղինակների՝ Նիկողայոս Տիգրանյանի, Սարգիս Բարխուդարյանի և այլ կոմպոզիտորների ստեղծագործությունների փոխադրմամբ ու գործիքավորմամբ։ Այդ աշխատությունները, որոնց թիվն անցնում է 70-ից, աչքի էին ընկնում բարձր պրոֆեսիոնալիզմով, երանգների վառ, գունեղ հարստությամբ, կատարման բարձր տեխնիկայով։

Գուրգեն Միրզոյանը գործնական, կոնկրետ աշխատանքով ցույց տվեց, որ ժողգործիքների և սիմֆոնիկ նվագախմբերի հակադրությունը անհիմն ու անմիտ վեճ է, որ դրանցից յուրաքանչյուրն ունի իր անժխտելի առավելությունները ու. ինքնատիպ առանձնահատկությունները, որ հասարակության հոգևոր կուլտուրայի հարստացման, գեղագիտական ըմբռնումների խորացման, զգացումների ազնվացման ասպարեզում դրանցից յուրաքանչյուրն ունի իր վճռական, անուրանալի նշանակությունը։

Գուրգեն Միրզոյանի աշխատանքի, ինչպես նաև նրա ստեղծագործական, կատարողական

[1] „Советское искусство", 30 (78) հոկտեմբերի, 1939 թ.։

հմտության հետ մոսկվացի արվեստագետներից շատերը հնարավորություն ունեցան մոտիկից ծանոթանալու։ Պատահական չէ, որ Մոսկվայի տասնօրյակից կարճ ժամանակ անց համամիութենական պրոֆեսիոնալ խորհրդի կողմից կազմակերպված խորհրդային ժողովուրդների երգի և պարի անսամբլի գեղարվեստականղեկավար Նովիկովից Միրզոյանը հրավեր է ստանում աշխատելու այդ անսամբլում որպես ուսումնական մասի վարիչ։ 1940 թվականի հունվարի 5-ին Գ. Միրզոյանն անցնում է իր պարտականությունների կատարմանը։

Գուրգեն Միրզոյանը գործունեության վերջին շրջանում աշխատում է Երևանի միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններում որպես մանկավարժ, խմբավար, երգի ու պարի անսամբլների ղեկավար։

1941—1942 թթ. ուսումնական տարում աշխատում է Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում որպես տեսական առարկաների դասատու։

1942—44 թվականներին Միրզոյանը ղեկավարում է Երևանի ադրբեջանական կանանց ակումբին կից գործող երգի և պարի անսամբլը։ Պետք է նշել, որ Հայաստանում դա ադրբեջանական առաջին բազմաձայն գեղարվեստական անսամբլն էր։

Հաջորդ՝ 1944 թվականին, Միրզոյանի ջանքե-

րով ու անմիջական ղեկավարությամբ հիմնադրվում է Երևանի աշխատանքային ռեզերվների ակումբի երգի ու պարի անսամբլը, որն այսօր հանրապետության ճանաչված կատարողական գեղարվեստական կոլեկտիվներից մեկն է։

1945—1946 թթ. ուսումնական տարում Միրզոյանը ղեկավարում է հայկական մանկավարժական ինստիտուտի երգեցիկ խումբը։ 1950 թվականին նա հրավիրվում է Ռոմանոս Մելիքյանի անվան, երաժշտական ուսումնարան, որտեղ ուսումնական մասի վարիչ և տեսական առարկաների դասատուի պաշտոնով աշխատում է մինչև 1958 թվականը։

Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում ժողովրդական գործիքների ուսուցման գործը կազմակերպված էր շատ վաղուց՝ դեռևս երաժշտական ստուդիայի կազմավորման երրորդ տարում։ Այդ բաժնում դասավանդել են նշանավոր երաժիշտներ, վիրտուոզ կատարողներ, որոնցից պետք է հիշատակել Սաշա Օգանեզաշվիլուն (Հովհաննիսյան), Սողոմոն Ալթունյանին, Սողոմոն Սեյրանյանին, Արամ Մերանգուլյանին, Գուրգեն Միրզոյանին (քյամանչիստ) և այլն։ Չնայած ուսուցչական ուժեղ կազմին, այնուամենայնիվ այս բաժնում ուսուցումն ընթացել է անկազմակերպ, անպլանային՝ մանկավարժական գրականության և կայուն ծրագրի բացակայության պատճառով։ Դժբախտաբար այդպես էլ շարունակ-

վում է մինչև օրս։ Գուրգեն Միրզոյանը ձգտեց միշտ- ինչ կարգավորել ուսման պրոցեսը, ստեղծել անսամբլներ և համապատասխան գրականություն։ Նրա ջանքերով կազմակերպվեց արևելյան գործիքագիտության և գործիքավորման առարկայի դասավանդումը, որն անչափ անհրաժեշտ է ժողովրդական գործիքների անսամբլների և նվագախմբի ղեկավարների համար։ Դեռ մինչև օրս էլ նրա ստեղծած գրականությունն է հրապարակի վրա։ Նրա գրած թառի կոնցերտը ժողովրդական գործիքների նվագախմբի նվագակցությամբ և այլ անսամբլային երկեր իրենց հաստատուն տեղն են գրավել այդ բաժնի ուսուցման ծրագրում։ Հիշյալ ուսումնա-ծրագրային հարցերի արմատական լուծումը պահանջում է ուսումնական հաստատությունների, մինիստրության և կոմպոզիտորների միության համատեղ ջանքերը՝ մանկավարժական գեղարվեստական գրականություն ստեղծելու ճանապարհով։

Երաժշտական ուսումնարանի գործունեությամբ էլ վերջանում է Գուրգեն Միրզոյանի լարված ու բեղմնավոր աշխատանքային կյանքը։

Այժմ Գուրգեն Միրզոյանը հանրագումարի է բերում իր ստեղծագործական անցած ուղին, վերանայում ու վերախմբագրում է իր ստեղծագործությունները։

Նա միանգամայն արժանի է կուսակցության և կառավարության կողմից շնորհված արվեստի

վաստակավոր գործչի պատվավոր կոչմանը, «Պատվո նշան» շքանշանին[1], որոնք նրա ազնիվ ու անձնվեր, բազմաբեղուն աշխատանքի վարձատրությունն են։

ԳՈՒՐԳԵՆ ՄԻՐՋՈՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՂԻՆ

Գուրգեն Միրզոյանի ստեղծագործությունները բազմատեսակ են ու բազմաժանր։ Երգեր, խմբերգեր, գործիքային երաժշտություն, կվարտետ, սիմֆոնիկ նվագախմբի համար գրված երկեր, կոնցերտ՝ թառի և ժողովրդական գործիքների նվագախմբի համար, նույն նվագախմբի համար 70-ից ավելի փոխադրումներ, մշակումներ և ինքնուրույն ստեղծագործություններ, դրամատիկական ներկայացումների երաժշտական ձևավորումներ։

Անկասկած, Գուրգեն Միրզոյանի ստեղծագործություններն արժանի են հատուկ ուշադրության և մանրազնին ուսումնասիրության, մասնագիտա-

---

1 *1939 թ. Մոսկվայում տեղի ունեցած հայկական արվեստի տասնօրյակի կապակցությամբ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության դեկտեմբերի 9-ի հրամանագրով պարգևատրվում է «Պատվո նշան» շքանշանով, իսկ 1950 թ. նոյեմբերի 28-ի՝ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով շնորհվում է արվեստի վաստակավոր գործչի կոչում։*

կան վերլուծության ու արժեքավորման, որը մեր խնդրի շրջանակներից դուրս է։

Գուրգեն Միրզոյանի կոմպոզիտոր-մանկավարժի ստեղծագործական առաջին քայլերը կապված են մանկական աշխարհի հետ։ Դեպի երեխաները տածած սերը և այն պարզ գիտակցությունը, որ հայրենի երաժշտության զարգացման հեռանկարը կապված է երիտասարդ սերնդի հետ, կոմպոզիտորներից շատերին, որոնց թվում նաև Գուրգեն Միրզոյանին, մղել է դեպի մանկական երգն ու երաժշտությունը։

Մանկավարժական հատուկ սիրով ու անմար հետաքրքրությամբ մեր արվեստագետները աշխատել են թափանցել մատաղ սերնդի ընկալումների և շահագրգռությունների ոլորտը, ստեղծել կոնկրետ ու հուզիչ երաժշտական կերպարներ, գունագեղ պատկերներ՝ պարզ ու տպավորիչ, անկեղծ և գերող։ Այդպիսին են եղել մեր երգի միծադուլն վարպետների երգերը, որոնք մինչև օրս էլ չեն կորցրել իրենց թարմությունն ու գեղարվեստական ներգործման ուժը։

Նախահեղափոխական շրջանի մանկական երաժշտական գրականության անմխիթար վիճակը կոմպոզիտոր-մանկավարժների առջև հրամայական պահանջ էր դնում լուծելու մանկապատանեկան երաժշտական գրականության ստեղծման անհետաձգելի խնդիրները։

1908 թվականից Ռոմանոս Միլիքյանի և Ալեքսան Մանուկյանի գլխավորած «Երաժշտական լիգայի» անդամները, որի կազմում էին Մինաքսել Միրզոյանը, Գեղարդիկը, Դանիել Ղազարյանը և այլ երիտասարդ երաժիշտներ, իրենց առաջնահերթ, նվիրական խնդիրը համարեցին մանկա-պատանեկան, դպրոցական երգերի ստեղծումը, ինչպես նաև մանկավարժական ժամանակակից մեթոդների կիրառումը։

«Լիգայի» անդամների գործունեությունը վճռական նշանակություն ունեցավ մանկական զեղարվեստական գրականության ստեղծման բնագավառում։

Գուրգեն Մրզոյանի ստեղծագործական ուղին էլ սկսվում է դպրոցական երգերի շարքով։ 1915 թվականին ադրբեջանական դպրոցականների համար գրել է երգեր՝ «Ճիրճիրամա յայ պահար» (Գարուն), «Դովշան» («Նապաստակ»), «Մաքթապտա» («Դպրոցում»), «Յաղրշ» («Անձրև»), «Եազ» («Ամառ»), «Ղուշլար» («Թռչուններ»), «Պաղչա» («Պարտեզ»)։ Այդ երգերի մասին խոսվել է նախորդ գլխում։ Այստեղ մնում է ավելացնել, որ երգերը գրված են ադրբեջանական պոետների և ժողովրդական բանահյուսության վառ ու կենդանի, մանկան հոգուն մոտ ու հասկանալի պատկերներով։ Երգերի բնապատկերներն ու կենդանական աշխարհը հավասարապես մոտ են և հարազատ երեխաների վառ ու դյուրաթորթոռ երևակայությա-

նը։ Այդ երգերի առաջին խմբագրությունն ունի ձևակառուցման (կոմպոզիցիոն) անավարտվածություն, դաշնամուրային նվագակցությունը պարզունակ է ու աղքատ։ Նշված թերություններն ղգալի չափով աննկատելի են դառնում շնորհիվ գիղեցիկ, պարզ ու հուզիչ մեղեդայնության, ղգացումների անկեղծության, որոնք այնպես անհրաժեշտ են երեխաների ընկալման համար։

Հետագայում, տպագրության պատրաստելիս, հեղինակը խնամքով վերամշակեց և վերացրեց նշված բացերը, դարձնելով երգերն ավելի կուռ ու արտահայտիչ։

Չնայած ստեղծագործական առաջին փորձերի չհրմ ընդունելությանն ու հաջողությանը, հեղինակն զգում էր իր պրոֆեսիոնալ գիտելիքների թերին և աշխատում լրացնել այն։

Միանգամայն բնական էր ստեղծագործական այն «ամլությունը», որը հարատևեց մոտ տասը տարի։

Անցած տարիները ուսումնառության, ստեղծագործական որոնումների, կոմպոզիցիայի տեխնիկայի տիրապետման, պրոֆեսիոնալ վարպետության բարձրացման մի ժամանակաշրջան էր, որոնց արդյունքն ակնհրև դարձավ հետագայում։

1924 թվականին են գրված դաշնամուրային մի շարք երկեր՝ «Սոնատային ալեգրոն», «Յումրեսկը», «Քառաձայն ֆուգան»։ Այդ երկերի համար բնորոշ է մեղեդայնությունը, ձևի ավարտված-

ծուլթյունը, դաշնամուրային ֆակտուրայի մշակվածուլթյունը։

Ժողովրդական լայն զանգվածների հեղափոխական տրամադրությունների ներարկման և նոր գաղափարների արմատավորման գործում անհրաժեշտ էին երաժշտական մատչելի և դյուրըմբռնելի ձևեր։ Այս իսկ պատճառով քսանական-երեսնական թվականների երաժշտական ձևերի մեջ առաջնուլթյունը տրվում է երգային երաժշտուլթյանը։

Հեղափոխուլթյան մրրկոտ օրերին երգը կոչված էր խաղալու իր նշանակալից, ոգեշնչող դերը։ Հետևաբար, միանգամայն հասկանալի և օրինաչափ երևույթ էր երգային ստեղծագործուլթյան հանդեպ ցուցաբերված հետաքրքրուլթյունը։

Ոգեշնչող, հեղափոխական պաթոսով լի երգը հավասարապես անհրաժեշտ էր թե՛ մեծահասակներին և թե՛ դպրոցականներին։ Այդ ղգում էր ամեն մի ազնիվ արվեստագետ, բանաստեղծ, երաժիշտ։ Գուրգեն Մխրզոյանը չէր կարող հեռու մնալ կյանքի թոհուբոհից, չարձագանքել ժամանակի հրամայական պահանջին և չկատարել իր՝ քաղաքացի-արվեստագետի նվիրական պարտքը՝ գրելով մի շարք երգեր մանուկների և մեծահասակների համար՝ «Լենին պապի», «Կաղնի ծառ», «Յարս գնաց կարմիր բանակ», «Հոկտեմբեր» և այլ երգեր ու ֆամբերգեր։ Ինչպես մանուկների, այնպես էլ մեծահասակների համար գրված մեն-

երգերն ու խմբերգերն աչքի են ընկնում իրենց անմիջականությամբ, կենսազգաց տրամադրությամբ, երաժշտական տրամաբանական հետևողականությամբ, ձևի և ֆակտուրայի հղկվածությամբ։ Այս շրջանի երգերի համար բնորոշ է քայլերգային բնույթը, որը ժամանակի հեղափոխական երգերի ոճային գլխավոր առանձնահատկություններից մեկն էր, և երգերին հաղորդում է առնական ու մարտական բնույթ։

Գուրգեն Միրզոյանի հեղափոխական երգերն աչքի են ընկնում քայլերգային ռիթմիկ բազմազանությամբ։

1925—30 թվականներին գրված երգերում նկատելի են տարբեր տրամադրություններ. մի կողմից առնական, խրոխտ, մյուս կողմից՝ քնարական, որոնք լրացնում էին իրար ու երգերն ազատում կերպարային միակերպությունից։ Երաժշտական կերպարները նկարծված են լուսաշող, պայծառ կենսազգացողությամբ։ Կյանքի երեվույթների սուբյեկտիվ ու հիվանդագին ընկալումները խորթ են եղել Գուրգեն Միրզոյանի հոգուն։ Հենց այդտեղից էլ ծնունդ է առնում նրա արվեստի լավատեսության, կենսասիրության, լույսի ու բերկրանքի տրամադրությունը։ Այս շրջանում ստեղծված մանկական երգերի համար բնորոշ է մեղմ քնարականությունը։ Բնության հիասքանչ տեսարանները ստեղծագործողին փոխադրում են քնարական զմայլանքի ու նրբին խոհերի ոլորտ-

ները. «Անտառ», «Ձմեռ», «Ձյան փաթիլներ», «Տարվա եղանակներ», «Զնծաղիկ»։ Հիշյալ մանկական երգերում անհուն զմայլանք կա դեպի բնությունն ու բնապատկերը։ Այս գործերի համար հատկանշական է անկեղծ, պարզ և հուզիչ մեղեդայնությունն ու երաժշտական նախադասությունների լակոնիզմը։ Պարզ, գունեղ ներդաշնակությունը լրացնում ու ամբողջականացնում է երաժշտական կերպարը՝ ստեղծում մանկան ընկալումներին մոտ ճշմարտացի ու թովչանքով լի բնության համայնապատկեր։

Այս շրջանի երգերում կարելի է հանդիպել աշխատավոր մարդու հոգեկան աշխարհը բացահայտող գործերի՝ համակված անկեղծ, խորապես մարդկային ապրումներով ու հույզերով։ Այդպիսի երգերից պետք է հիշատակել «Հնձվորի սերը», «Կանաչ հագավ իմ այգին», «Մատրոս տղա», իսկ խմբերգերից՝ «Քուրայի մոտ», «Դարբիններ», «Դարբինների երգը» և այլ ստեղծագործությունները։

Երեսնական թվականներին է գրված դրամատիկական թատրոնների համար երաժշտությունը։ Բքիլիսիի Շահումյանի անվան հայկական դրամատիկական թատրոնի համար գրել է «Հին Թիֆլիսը» և «Խաթաբալա» ներկայացումների երաժշտությունը։ Այդ պիեսները կազմել է ռեժիսյոր Քափանակյանը, օգտագործելով անմահ Սունդուկյանի թատերգության առանձին հատվածները։

Սունդուկյանը սիրելի ու հարազատ է ամեն մի կովկասցու։ Իսկ Թիֆլիսեցու համար Սունդուկյանի ստեղծագործությունները այն հարազատ մըթնոլորտն են, որտեղ մտորիկ անցյալը իր դեղարվեստական բարձր արտահայտությունն է գտել։

Հարազատ միջավայր, աննոդծելի կերպարներ, որոնք ներշնչանքի աղբյուր են, դրդում են երաժըշտական ձև ու կերպարանք տալու այն ամենին, ինչից միայն աղոտ հուշ է մնացել։ Նյութը ինքնին կոմպոզիտորին մղում է Թիֆլիսի ժողովրդական կենցաղի մեջ արմատացած երաժշտական վառ ու կենդանի ինտերնացիոնալը՝ հյուսելով ինքնատիպ, հյութեղ, հումորով լի երաժշտական հատվածներ, որոնք բնական կերպով հյուսելով դրամատիկական երկի գաղափարական հենքին, նպաստում են ներկայացման տրամադրության և գործող անձերի նկարագրի ամբողջականացմանը։

1935—1936 թվականներին Լենինականի Մռավյանի անվան թատրոնի համար գրում է «Գոշ» թատերգության երաժշտությունը։

Վերոհիշյալ թատերախաղերի համար գրված երաժշտությունը գալիս է հաստատելու կոմպոզիտորի տարբեր երաժշտական նկարագրեր կերտելու ունակությունը։

Երեսնական թվականներին Գուրգեն Միրզոյանը հաճախ անդրադառնում է ժողովրդական երաժշտությանը։ Ժողովրդական երգերի մշակումներից պետք է նշել հինգ խմբական քնարական

գողտրիկ երգ, որոնց թվում մեծ վարպետի՝ Ավետիք Իսահակյանի տեքստով գրված հանրահայտ «Սիրեցի, չարս տարան» երգը, որի երաժշտությունը հորինել է ժողովուրդը, ինչպես նաև «Ո՞ւր ես, չար ջան», «Նեչինիմ աման», «Դերիկո հոյ նար» և Լենինականի ժողովրդական, նուրբ հումորով լի «Արփա չայի քյանարը» երգերը։ Այդ խմբերգերն աչքի են ընկնում ֆակտուրայի մշակվածությամբ, հստակ ձայնատարությամբ, ձայներանգների հմուտ օգտագործմամբ, ինչպես նաև արտահայտչական միջոցների պարզությամբ ու զսպվածությամբ, որն ավելի ցայտուն է դարձնում ժողովրդական երաժշտության կերպարը, մեղեդիական գծի անաղարտությունն ու ճաշակի առանձնահատկությունը։

Երեխաների թվականներին գրած երգերում գերիշխում է քնարական շունչը, կենսահաստատ, լուսավոր և խորապես մարդկային կենսահոդ ապրումները, բայց այս շրջանի երգերին պակասում է ժանրային բազմազանությունը, կյանքի երևույթների բազմակողմանի ընկալումն ու արտացոլումը։ Նշված բացը որոշ չափով մեղմացնում է թատերգության համար գրված երաժշտությունը։

Քառասնական թվականները սովետական հայրենիքի և նրա ժողովրդի կյանքում դրամատիկորեն լարված, կենաց և մահու պայքարի տարիներ էին։ Յուրաքանչյուր ոք իր լուման էր ներդնում

Հայրենիք ներխուժած արյունարբու թշնամու ոչնչացման և հաղթանակի հասնելու գործում։ Սովետական արվեստագետները հայրենիքի զոհասեղանին դրեցին իրենց ամենանվիրական զգացումները՝ արվեստի հրաշունչ խոսքով ատելության սրբազան հուր վառելով մարտիկների հոգում; ոգեշնչելով սխրանքի, մոտեցնելով հաղթանակի բաղձալի ժամը։

Այդ ծանր ժամանակաշրջանում արվեստագետներն անհողդողդ մնացին առաջավոր դիրքերում, սրբությամբ կատարեցին իրենց պարտքը հայրենիքի հանդեպ՝ ոմանք զենքով, մյուսներն իրենց արվեստի ոգեշունչ ուժով։

Գուրգեն Միրզոյանն անմասն չմնաց ընդհանուրի գործին՝ հայրենի հերկրի հաղթանակին նվիրեց իր ոգեշունչ հրգերը։ Այս շրջանի ստեղծագործությունները իրենց բովանդակությամբ և տրամադրությամբ բոլորովին նոր որակ են կազմում Գուրգեն Միրզոյանի ստեղծագործական կենսագրության մեջ. ջերմ հայրենասիրություն, անսահման նվիրվածություն հայրենիքին ու ժողովրդին, ատելություն դեպի ոխերիմ թշնամին։ Ահա այն զգացումները ու գաղափարները, որով հագեցած են նրա Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանի ստեղծագործությունները. «Առա՜ջ, հանուն հայրենիքի», «Պարտիզան պապին», «Կանանց խոսքը», «Իմ հայրենիքը», «Երգ տղին» (խոսք՝ Սիլվա Կապուտիկյանի)։

Ահա Սիլվա Կապուտիկյանի «Երգ տղին» բանաստեղծությունը.

Արտուտը պիտի քեզ օրոր ասեր,
Շուրթերս անդորր՝ հնքիաթներ ոսկի,
Բայց շանթն է ճայթում օրոցքիդ վերև,
Վրադ սավառնում բազեն երկաթի...

Խմացիր, տղաս, բշնամին է այդ
Խռովել արդար քունդ դեռ մանկուց,
Այդ մանուկ միտքդ թող չմոռանա,
Օրերն այս անցած և պատգամն սուրբ։

Թող իմ կաթի հետ հուրն առելության
Քո ջինջ, անմեղ արյան մեջ ներծծվի,
Մեծացիր՝ չարին բարուն դիտակ,
Մեծացիր որպես ռազմիկ ու կարիճ։

Բազեն թող քո աչքերին քուն բերի,
Քնիր շանթերի, որոտների մեջ.
Մանկուց սովորիր առել բշնամուն,
Քանզի նա մանկուց քո կյանքը խռովեց...

Գուրգեն Միրզոյանը բանաստեղծությունն ընթերցել է յուրովի։ Երաժշտությունը խռովահույզ է, տագնապալից, դրամատիկորեն լարված և ընդգծված հերոսական, էպիկական շնչով։ Երգը զերծ է բանաստեղծուհու մարտական շնչից, բայց ընդհանուր գծերով ճիշտ է մեկնաբանված բանաստեղծության ոգին ու տրամադրությունը։

Դյուցազուններից արյունով ներկվից հայրենի հողը, մեծ գործը պահանջում է մեծ զոհեր։ Ոչըն-

չացվեց հայրենի երկրի և համայն առաջավոր մարդկության ոխերիմ թշնամին։ Սովետական ժողովրդի համար սկսվեց մի նոր ժամանակաշրջան, խաղաղ ստեղծագործական պայքարի և վերաշինության, ուժերի գերագույն լարման շրջան։ Հաղթանակի բերկրանքը, հայրենի օջախի վերականգման անհուն տենչը աշխատանքային սքանչելիքների էր մղում բոլորին։ Ժողովուրդը խորին կսկիծով սգում էր իր անձնվեր որդիների մահը և փառքով ու խինդով դիմավորում ողջ մնացածներին, որոնք իրենց հերոսությամբ ու կորովի քաջագործություններով բերեցին բաղձալի ազատություն ու հաղթանակը։ Ժողովուրդն ինքն է գովերգում իր զավակներին, երգեր հյուսում, երգերի մեջ դնում սիրո, անհուն կարոտի և գորովանքի զգացումները։

Կարո՞ղ էր արվեստագետը չմասնակցել ժողովրդական անհուն խնդությանը։ Քառասնական թվականների երկրորդ կեսին Գուրգեն Մխրոյանի ստեղծագործության մեջ ներթափանցում են հայ ժողովրդական երգի առանձին կերպարներ։ Հաճախ է նա դիմում ժողովրդական բանահյուսությանը։ Այդ բանահյուսության մեջ լիրիկական, քնքուշ սեր կա դեպի բանակային չարը, ռազմիկն ու մարտիկը։ Ահա դրանցից մեկը.

Ցարս գնաց կարմիր բանակ,
Ցանակին մեռնեմ...

Գնել է ինձ մի նամակ,
Նամակին մեռնեմ...
Ինձ սրտանց բարև է ղրկել,
Բարևին մեռնեմ,
Ֆաշիստների դեմ է կռվում,
Կռվողին մեռնեմ,
Հաղթանակով նա ետ դարձավ,
Հաղթողին մեռնեմ,
Փառքի նշանով զարձավ,
Իր բոյին մեռնեմ, իր սոյին մեռնեմ։

Այս երգը գրված է նախ մեներգի և ապա խմբերգի համար։ Երկու մշակումներից առաջնությունը պետք է տալ խմբերգին, որտեղ մայր հղանակի և առանձին ձայների հյուսվածքն ու ներդաշնակումը ոճական և օրգանական կուռ միասնություն են կազմում։ Ժողովրդական բանահյուսությունը թևավորել է կոմպոզիտորին դիմել մեր ժողովրդական երգերի ևևէջներին, իսկ այդ ևևէջները մեզ հիշեցնում են հայ ժողովրդական երգերից «Քնզի մեռնեմ»-ը, որը դեռևս մեր խմբերգային գրականության սկզբնավորման շրջանում գրի է առել ու մշակել Քրիստափոր Կարա-Մուրզան՝ միացնելով երկու տարբեր ժողովրդական երգեր՝ «Ալագյազ» և «Քնզի մեռնեմ»։

Հաղթանակից հետո Գ. Միրզոյանը գրում է մի շարք խմբերգեր, որտեղ արտացոլված են հաղթանակի խնդությունն ու բերկրանքը. դրանց թվին են պատկանում՝ «Տոն է այսօր», «Հաղթանակի երգ», «Ողջույն, Մոսկվա» և, ուրիշներ, որոնք

ներթափանցված են տոնական տրամադրությամբ։

Քառասնական թվականների երկրորդ կեսից մինչև վաթսունական թվականները Գուրգեն Միրզոյանի ստեղծագործության և ներշնչանքի աղբյուրը համայնական դաշտերի հերոսն է՝ իր հույզերով ու լուսեղեն նրաղներով։ Այդ տրամադրությունների արտահայտությունը գտնում ենք ներքոհիշյալ խմբական երգերում՝ «Յարս սիրուն է», «Ծաղկավոր լանջեր», «Նունե ջան», «Աշխօր ունեմ», «Կոլխոզային պարերգ» և այլ գործերում։ Այս նույն ժամանակաշրջանում Գուրգեն Միրզոյանը մեներգերին և խմբերգերին զուգահեռ, հատուկ ուշադրություն է նվիրում նաև կամերային, սիմֆոնիկ, ժողովրդական գործիքների նվագախմբին, ինչպես և երգի-պարի անսամբլին։ Այս միավորների համար գրում է մի շարք ստեղծագործություններ։

1944 թվականին է գրված եռմասնի սյուիտը՝ սիմֆոնիկ նվագախմբի համար։ Գուրգեն Միրզոյանի վաստակը նշանակալից է ժողովրդական գործիքների նվագախմբի և առանձին գործիքների համար գրված կոնցերտներով ու մենանվագներով։ Դրանց թվին են պատկանում եռմասնի սյուիտը՝ ժողովրդական գործիքների նվագախմբի համար, եռմասնի կոնցերտը՝ թառի և նվագախմբի համար, ֆանտազիա՝ քյամանչայի համար և այլ ստեղծագործություններ։ Ժողովրդական

գործիքների համար ստեղծված գրականությունը մեզանում չափազանց աննշան է ու աղքատ։ Պրոֆեսիոնալ կոմպոզիտորները հազվադեպ են անդրադառնում այս խիստ կարևոր և ժողովրդի սրտին մոտ ու հարազատ բնագավառին։ Գուրգեն Միրզոյանը սիրով անդրադառնում է և ուժերը ներածին չափ նպաստում ժողովրդական գործիքների վերաբերյալ գրականության տարբեր սեռերի զարգացմանը։ Մինչ այժմ էլ Գուրգեն Միրզոյանի գործերն այդ բնագավառում նշանակալից էջեր են կազմում։ Հատկապես 1950—56 թվականներին գրած սյուիտը, կոնցերտը, ֆանտազիան և պարը վերջին տարիներին նրա ստեղծած լավագույն գործերի շարքին են պատկանում։ Այս գործերն անկասկած հարստացնում են ժողովրդական գործիքների աղքատիկ և սակավաթիվ գրականությունը, որը ուսումնական հաստատությունների ծրագրերի անբաժան մասն է կազմում։

Ինչպես նվագախմբի, այնպես էլ մենանվագի համար գրված գործերն աչքի են ընկնում իրենց պրոֆեսիոնալիզմով, վառ մեղեդայնությամբ, թարմ ու գունեղ ներդաշնակությամբ, գործիքների ձայնածավալի կատարողական տեխնիկական հնարավորությունների առավել և նպատակահարմար օգտագործմամբ։

Գուրգեն Միրզոյանը երգի-պարի անսամբլի համար կատարել է մի շարք մշակումներ։ Դրանք գրված են քառաձայն երգեցիկ խմբի և ժողովըր-

դական գործիքների համար։ Մշակումներից պետք է նշել «Արփա չայի քյանարը», «Կոլխոզային», «Առատություն» և «Երկաթուղային սյուիտ»-ը։

Վերոհիշյալ գործերի հետ միասին, Գուրգեն Միրզոյանի տեսադաշտից դուրս չի մնում նաև մանկական գրականությունը։

1948 թվականին լույս է տեսնում նրա դաշնամուրային մանրանկարների առաջին ժողովածուն։ Մանրանկարները գրված են երաժշտական դպրոցների 3—4-րդ դասարանների աշակերտության համար։ Հաշվի են առնված նրանց կատարողական տեխնիկական հնարավորությունները։ Այս ժողովածուի առանձին համարների վերնագրերը, ինչպիսիք են «Պար», «Թիթեռ», «Տոնի նախօրյակին», «Մտորումներ», «Նազանի», «Զարթոնք», «Խոհեր», գալիս են ասելու, որ հեղինակը կարողացել է ստեղծել մանկական հոգեկան աշխարհին մոտ պարզ ու հուզիչ պատկերներ։

Այդ զգացումները մերթ հորդուն են, սլացիկ, ինչպես, օրինակ՝ «Պարը», մերթ թեթև ու թափանցիկ՝ «Թիթեռ», մերթ ցնծալից, պայծառ՝ «Տոնի նախօրյակին», մերթ ներքնասույզ ու գորովալից՝ «Մտորումներ», մերթ պչրանքով լի ու քմահաճ՝ «Նազանի», մերթ էլ զուսպ, ինքնամփոփ ու խոհական։ Մանրանկարներին բնորոշ է մեղեդիական գծի տրամաբանական կառուցվածքը, ձևի ամբողջականությունը, երաժշտական լեզվի ու ոճի մաքրությունը։ Բայց այդ գործերի համար բնո-

րոշ է նաև շարահյուսման (ֆակտուրայի) և զարգացման միջոցների միասպաղաղությունն ու միակերպությունը։ Նույն մեղեդին կամ երաժշտական կերպարը անփոփոխ կրկնվում է մեկ ու երկու ութնյակ վերև կամ ներքև։ Նման երևույթը բնորոշ է ամբողջ ցիկլին, բացառությամբ՝ վերջինի։ Այս հանգամանքը որոշ չափով թուլացնում է ստեղծագործության գեղարվեստական արժեքը։

1951 թվականին լույս է տեսնում Գուրգեն Միրզոյանի դաշնամուրային երկերի երկրորդ ժողովածուն՝ պրելյուդները։ Այդ ժողովածուն նոր առաջընթաց քայլ էր առաջին ժողովածուի համեմատությամբ։ Թե՛ ձևակառուցման, թե՛ թեմատիկ զարգացման և թե՛ դաշնամուրային ֆակտուրայի հղկվածության տեսակետից գործերն ավելի կատարյալ են։

Այդ երկու ժողովածուներն էլ որոշ չափով լրացնում են այն բացը, որ զգացվում է մանկական դաշնամուրային գրականության բնագավառում։

Հարկ է հիշատակել, որ դեռ մինչև օրս էլ հանրապետության երաժշտական ուսումնական հաստատություններում ազգային մանկավարժական գրականության պակասը սուր կերպով է զգացվում, որի հետևանքով ուսումնա-դաստիարակչական և ծրագրային հարցերում մեծագույն դժվարությունների առաջ են կանգնում։ Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր ազգային ուսումնական հաս-

տատուիյուն կոչված է նպաստելու ազգի՝ տվյալ ժողովրդի հոգևոր մշակույթի խոր ու բազմակողմանի ճանաչմանը և ուսումնասիրմանը, որը նախադրյալներ է ստեղծում ազգային կուլտուրայի նոր՝ առաջընթացի համար։ Դպրոցը կամ ուսումնական հաստատությունը կոչված է իր սաներին դաստիարակելու ինչպես համամարդկային, այնպես էլ իր ժողովրդի ստեղծած հոգևոր մշակույթով։ Այլ խոսքով, համամարդկայինի ու ազգայինի համադրումը բարձր ու ցանկալի արդյունք կտա ազգային կադրերի դաստիարակման գործում։ Բոլորն են ընդունում ազգային և միջազգային հոգևոր մշակույթի զուգակցման անհրաժեշտությունը, բայց իրականում մեր հանրապետության հրաժշտական ուսումնական հաստատություններում՝ յոթնամյակից մինչև կոնսերվատորիա, կատարողական դասարանների երգացանկի 90—95 տոկոսը բաղկացած է եվրոպական, ռուսական և ժամանակակից ստեղծագործություններից։ Սրագրերի միայն չնչին տոկոսն են կազմում ազգային հեղինակների գործերը։ Հայ երաժշտական մշակույթի յուրաքանչյուր ներկայացուցիչ, որը խորապես շահագրգռված է ազգային հրաժշտության առաջընթացով, չի կարող անտարբեր անցնել այս աղաղակող բացերի կողքով և իր ստեղծագործական ջանքերը չներդնել նշված թերին լրացնելու գործում։ Ցավով պետք է նշել, որ այդպիսիները հազվադեպ են։ Այլապես ինչո՞ւ

բացատրել, որ այնքան սակավաթիվ են մանկավարժական-գեղարվեստական գրականությամբ զբաղվող կոմպոզիտորները, ինչո՞ւ մինչև այժմ չեն ստեղծված մեթոդական ձեռնարկներ առաջինից մինչև յոթերորդ և ավելի բարձր դասարանների երեխաների համար։ Անտարակույս, կազմողներն իրենք մանկավարժներ պետք է լինեն։ Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ հայ կոմպոզիտորները լուրջ մտահոգվեն, շահագրգռություն հանդես բերեն դեպի մանկավարժական գրականությունը, առանց որի անկարելի է երեխաների մեջ ազգային ոճ և ոգի զարգացնել։ Ի՞նչ է ստեղծված մինչև այժմ։ Միայն դաշնամուրային մեկ ձեռնարկ, որը շատ վաղուց կազմել է Սվգհինիա Խոսրովյանը։ Այդ ձեռնարկից միայն հուշ է մնացել։ Դաշնամուրային մանկավարժական գրականության բնագավառում շնորհակալ աշխատանք է կատարել Սարգիս Բարխուդարյանը և պատահական չէ, որ այդ գործերը մեր երաժշտական դպրոցների ծրագրերում իրենց մշտական և հաստատուն տեղն են գրավում։ Պետք է նշել նաև Արմեն Տիգրանյանի դաշնամուրային զողտրիկ մանրանկարները, Վահան Ումր-Շատի դաշնամուրային պիեսները, Գ. Մլրզոյանի մեր հիշատակած գործերը։

Թյուրիմացությունների տեղիք չտալու համար, հարկ է շեշտել, որ խոսքը վերաբերում է ցածր դասարանների աշակերտության համար ստեղծ-

ված մանկավարժական գրականության, որտեղ հաշվի պետք է առնվի աշակերտի կատարողական, տեխնիկական հնարավորությունների աստիճանական զարգացումը։ Իսկ ինչ վերաբերում է դաշնամուրային գրականության այլ ձևերին, ինչպիսիք են՝ սոնատա, կոնցերտներ, պրելյուդներ, պիեսներ՝ այս կարգի գործերից ստեղծվել են բավականաչափ շատ, նույնիսկ այնպիսի գործեր, որոնք իրենց գեղարվեստական նշանակությամբ դուրս են եկել ազգային նեղ շրջանակներից և համաշխարհային ճանաչում ստացել։ Այդ ստեղծագործությունները մեր դպրոցականների և միջնակարգ ուսումնական հաստատությունների ուսանողների կատարողական հնարավորություններից վեր են և չեն կարող նպաստել ուսանողության աստիճանական զարգացմանը։ Այս իսկ առումով Գուրգեն Միրզոյանի դաշնամուրային մանրանկարներն արժանի են դրվատանքի։

Ծանր հիվանդության հետևանքով Գուրգեն Միրզոյանի ստեղծագործության վերջին շրջանը (60-ական թվականները), առանձնապես նշանակալից չեղավ։

Չնայած ծանր վիճակին, կոմպոզիտորը հաղթահարում է ֆիզիկական թուլությունը և շարունակում գրել։

Գուրգեն Միրզոյանն իր կյանքի հասուն շրջանում կրկին անգամ վերադառնում է մանկական երգերին։ Նախ վերանայում է 1925 թվականին

գրած «Լենին պապին», «Անտառ», «Ձմեռ», «Ջյան փաթիլներ», «Նանիկ», «Ընծաղիկ», ինչպես նաև 1950 թվականին գրած «Տոնածառ», «Ես թիթեռ եմ», «Այգեբաց», «Եկավ գարուն» և «Իմ ուլիկ» երգերը, որոնք վերամշակվել են 1956 թվականին։

60-ական թվականներին նա գրում է մի նոր երգաշար, բաղկացած հետևյալ երգերից. «Գարնանային», «Ճանճը», «Այն ո՞վ արեց», «Բայբայ»։ Այս երգերն աչքի են ընկնում իրենց պարզությամբ, անմիջականությամբ, գեղարվեստական առումով ամբողջական են և ավարտուն։

Այդ երգերի հաջողությանը մեծապես նպաստում են բանաստեղծության այն կերպարները, որոնք ստեղծել են Դազարոս Աղայանը, Հայրապետ Հայրապետյանը, Սիլվա Կապուտիկյանը, Աղատ Վշտունին և, վերջապես, ինքը՝ ժողովուրդը։

Մանկական այդ գործերում, ինչպես տեքստի ընտրության, այնպես էլ նրանց երաժշտականացման հարցում կոմպոզիտորը հանդես է բերում բարձր ճաշակ և մանկական ներքնաշխարհի լավ ճանաչողություն։

Գուրգեն Միրզոյանի համար գեղարվեստական երգն հանդիսանում է գեղագիտական և բարոյական դաստիարակության լավագույն միջոց, կյանքի ու բնության երևույթների ճանաչողության հզոր ազդակ։

Որքան վառ ու ճշմարտացի են գեղարվեստական երկի կերպարները, այնքան էլ հզոր ու ներգործուն է հուզական և գաղափարական ազդեցությունը։ Գեղարվեստական երգի կատարելությանը ոչ միայն բանաստեղծական և երաժշտական կերպարների ներդաշնակ միասնության միջոցով են հասնում, այլև ձևի ու բովանդակության անքակտելի միասնությամբ։ Նման հայեցակետն էլ հանդիսանում է Գուրգեն Միրզոյանի մանկական երգերի ստեղծման սկզբունքային, առաջատար նշանաբանը։ Մանկական երգերում մեծ նշանակություն ունի բանաստեղծական պատկերավոր խոսքը, որի միջոցով երեխան հաղորդակից է դառնում երաժշտության հուզական կերպարներին։ Հենց այս հանգամանքն էլ թելադրում է կոմպոզիտորին որոնելու և գտնելու այնպիսի բանաստեղծություններ, որոնք իրենց գեղեցիկ երաժշտականությամբ և պատկերներով գրավում են մանուկներին։ Դրանում համոզվելու համար ուսումնասիրենք օրորոցային երգի բանաստեղծական տեքստերից մեկը.

Նանիկ արա, անուշ բալիկ,
Հովի, գովի քեզ տակ,
Սիրուն դեմքիդ վարդ է բացվել,
Նանա, նանա, իմ բալիկ։

Մտավ արևն իր մոր գիրկը,
Ելան աստղեր ու լուսին,

Աստղ ու լուսին զով հովի հետ,
Նանա, նանա քեզ ասին։

Մայրական շնչով ջերմացած այս քնքշանքով լի բնապատկերը պարուրում է մարդու հոգին խաղաղ ու անդորր, երանավետ զգացումով։ Սիլվա Կապուտիկյանի գրչին է պատկանում նաև դաստիարակչական բնույթի «Այն ո՞վ արեց» երգի տեքստը։ Ահա այն.

Այն ո՞վ արեց՝
Գետին ընկած խնձոր առավ,
Առանց լվալ բերան տարավ։
— Լալան չարեց,
Խոզիկն արեց։

Այն ո՞վ արեց՝
Առանց գդալ մածուն կերավ,
Երեսն ամբողջ մածուն դառավ։
— Լալան չարեց,
Արլորն արեց։

Այն ո՞վ արեց՝
Գետնից կեղտոտ խնձոր չառավ,
Ու գդալով մածուն կերավ.
Ջռոգռոաց, աղմուկ չարեց,
Տատի քունը չխանգարեց։
— Լալան արեց,
Լալան արեց։

Այս պարզ, մանկան հասկացողությունների համար հասկանալի տողերի մանկավարժական և

դաստիարակչական նպատակադրումը ավելի քան որոշակի է ու հստակ։

Մանկական գրականությունից վերցրած այս երկու բանաստեղծություններին կարելի է ավելացնել նաև Ղազարոս Աղայանի, Խնկո-Ապոր, Հ. Աղաբաբի, Հայրապետ Հայրապետյանի, Ազատ Վշտունու և սովետական այլ հեղինակների գործեր։ Բայց վերևում նշված երկու ոտանավորներն էլ բավական են գաղափար կազմելու կոմպոզիտորի գրական ճաշակի և նախասիրությունների մասին։ Իր ժամանակին նշեցինք մանկական երգերի երաժշտական լեզվի պարզությունն ու մատչելիությունը, մեղեդիական և դաշնամուրային շարահյուսանքի մշակվածությունը, բանաստեղծական ու երաժշտական կերպարների միասնությունը։ Մանկագիրների համար գոյություն ունի մի վտանգավոր վիճակ, երբ գաղափարների և պատկերների պարզության ձգտումը հանգեցնում է պարզամտության, մանկամտության։ Եղակի չեն այն դեպքերը, երբ պրոֆեսիոնալ անկարողությունը նենգափոխվել և քողարկվել է պարզության դիմակի տակ։ Բարեբախտաբար Գուրգեն Միրզոյանի ստեղծագործություններն աչքի են ընկնում իրենց պրոֆեսիոնալիզմով ու վարպետությամբ։ Անկախ ստեղծագործությունների տեսակներից՝ մանուկների թե մեծահասակների համար, նա մնում է խստապահանջ պրոֆեսիոնալիզմի դիրքերում։

Այդ են վկայում միևնույն ստեղծագործությունների մշակումն ու խմբագրումները տարբեր ժամանակներում։ Երբեմն երգի առաջին և վերջին խմբագրության միջև ընկած է քառասնամյա ժամանակաշրջան։ Դա ինքնըստինքյան վկայում է կոմպոզիտորի բարձր պատասխանատվության, անբավարարվածության զգացման սեփական ստեղծագործությունների նկատմամբ քննադատական մոտեցման մասին։ Սրանք լուրջ արվեստագետի մշտական ուղեկիցն են, արվեստագետ, որը շարունակ հետևում է իր զարգացմանը։ Տարիների փորձով և գործով իմաստավորված խոհուն արվեստագետի համար վաղ շրջանի ստեղծագործությունները անկատար են թվում, այստեղից էլ առաջ է գալիս վերամշակման, վերախմբագրման ցանկությունն։

Գուրգեն Մխրզոյանը պատկանում է այն վաստակաշատ արվեստագետների շարքին, որոնք իրենց արվեստով նպաստել են մեր կյանքի առաջընթացին։ Սովետական ժողովրդի կյանքում տեղի ունեցած պատմական իրադարձությունները իրենց արտացոլումն են գտել նրա մոտ. ուրախության թե վշտի, աշխատանքային սխրանքների թե չար ոսոխի դեմ մղած հերոսական գոտեմարտերի ժամերին նա արձագանքել է իր արվեստով ու գործունեությամբ։ Վշտի ժամին իր երգերի ոգեշունչ լեզվով նեցուկ է հանդիսացել վհատված հոգիներին և վառ պահել գալիքի պայծառ հավատը։

Ներգործուն արվեստը մարդկային կյանքի մշտական և լուսատու ուղեկիցն է։ Ասում են, թե միայն չար մարդիկ երգ չունեն։ Կոմպոզիտորին հայտնի է այդ ասույթը, բայց նրան հայտնի է մի այլ ճշմարտություն ևս, որ յուրաքանչյուր ժամանակ ունի իր բնորոշ երգը, որի պլեխավոր առանձնահատկությունը ժամանակի գերիշխող գաղափարների ու խոհերի արտացոլումն է։ Դրա պատճառով էլ կոմպոզիտորի երաժշտությունը մերթ առնական է, խրոխտ, մերթ քնարական, նրբին ու մեղմիկ, երբեմն էլ այն դառնում է ցասումնալից, դրամատիկորեն լարված, նազանքոտ, սեթևեթող, մերթ էլ կատակող, հումորով լի։ Կոմպոզիտորի ստեղծագործությունների մեջ ժամանակի շունչ կա, օրերի հնք, հենց սա էլ հանդիսանում է քաղաքացի-արվեստագետի իսկական կոչումը, որով պայմանավորված է ստեղծագործողի դերն ու նշանակությունը հասարակական կյանքի առաջընթացում։

Վաստակավոր արվեստագետը բոլորել է իր կյանքի 75-րդ գարունը, երեք քառորդ դար, որից հինգ ու կես տասնամյակ նվիրված է եղել գեղեցիկ ու հոգեշահ գործին՝ մարդկային զգացումների նրբացմանն ու ազնվացմանը։

Կարող ենք վստահորեն ասել, որ Գուրգեն Հովհաննեսի Միրզոյանի կյանքը նվիրաբերված է բարու, գեղեցկի և լուսավոր գաղափարների հաստատմանը։

ՏՊԱԳՐՎԱԾ ԴՈՐՇԵՐ

Ա. ՄԵՆԵՐԳԵՐ

1. Յոթ մանկական ադրբեջանական երգ

Տպագրված է 1925 թվականին, Մոսկվայում, Անդրկովկասի հրատարակչության Ադրբեջանական սեկցիայի կողմից։

Բ. ԵՐԳԵՐ ԵՎ ՌՈՄԱՆՍՆԵՐ ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ՆՎԱԳԱԿՑՈՒԹՅԱՄԲ

1. «Թրքուհին»
2. «Հարվածային թրքուհին»
   Հայպետհրատ, Երևան, 1934 թ.
3. «Երգ տղային»
   խոսք՝ Ս. Կապուտիկյանի, հրատ.՝
   Երաժշտական ֆոնդի Հայաստանի
   բաժանմունքի, Երևան, 1948 թ.
4. «Ալվան գորգ»
5. «Աշտարակի աղջիկ»
   խոսք՝ Հովհ. Ղուկասյանի,
   Հայպետհրատ, Երևան, 1950 թ.

Գ. ԱՄԲԵՐԳԵՐ

1. «Հոկտեմբեր» («Հոկտեմբեր» ժողովածուի մեջ), Թիֆլիս, 1924 թ.

ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ ԵՐԿԵՐ

Ա. «ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐ» («Մինիատյուրներ»)

1. «Պար»
2. «Թիթեռնիկ»
3. «Տոնի նախօրյակին»
4. «Մտորումներ»

5. «Նազանին»
6. «Զարթոնք»
7. «Խոհեր»

Տպագրել է Հայպետհրատը, Երևան, 1948 թ.

Բ. ՊՐԵԼՅՈՒԴՆԵՐ

1. Անդանտե քանտաբիլե
2. Ալեգրո
3. Անդանտին
4. Ալեգրո
5. Ալեգրո մա նոն տրոպո
6. Ադաջիո

Տպագրել է Հայպետհրատը, Երևան, 1951 թ.

ԱՆՏԻՊ ԳՈՐԾԵՐ

Ա. ԵՐԳԵՐ, ՌՈՄԱՆՍՆԵՐ

1. «Կաղնի ծառ». խոսք՝ ժողովրդական — 1925 թ.
2. «Ցարս գնաց կարմիր բանակ» — 1925 թ.
3. «Հնձվորի սերը». խոսք՝ Մ. Կորյունի — 1929 թ.
4. «Կանաչ հագավ իմ այգին». խոսք՝ Ա. Գրաշու — 1939 թ.
5. «Մատրոս տղա». խոսք՝ Ս. Տարոնցու — 1939 թ.
6. «Կանչում են ինձ». խոսք՝ Շ. Կուրղինյանի — 1939 թ.
7. «Ահա՛ չ, հանուն հայրենիքի». խոսք՝ Վ. Հեքեդեկումաչի — 1943 թ.
8. «Պարտիզան պապին». խոսք՝ Ի. Ուտկինի — 1943 թ.
9. «Կանանց խոսքը». խոսք՝ Մ. Մարգարյանի — 1943 թ.
10. «Իմ հայրենիք». խոսք՝ Ա. Գրաշու — 1944 թ.

ԴԱՇՆԱՄՈՒԹՅԱՆ ԵՐԿԵՐ

1. «Սոնատային ալեգրո» — 1924 թ.
2. «Ցումորեսկ» — 1924 թ.
3. «Քառաձայն ֆուգաս

4. «Մանկական պիեսներ» — 1947 թ.
5. «Պիոներական հավաք» — 1951 թ.
6. «Սոնատինա» — 1953 թ.
7. «Պիեսներ» — 1964 թ.

Բ. ՍԻՄՖՈՆԻԿ ԵՐԿԵՐ ԵՎ
ԿԱՄԵՐԱՅԻՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Էսքիզ» — 1955 թ.
2. Սյուիտ երեք մասից — 1954 թ.
3. Լարային կվարտետ չորս մասից — 1950 թ.

Երկեր ժողովրդական գործիքների և նվագախմբի համար

1. Սյուիտ (հոմասանի) ժողովրդական գործիքների նվագախմբի համար — 1950 թ.
2. Պար — 1952 թ.
3. Հոմասանի կոնցերտ քառի համար նվագախմբի նվագակցությամբ — 1955 թ.
4. Ֆանտազիա քյամանչայի համար — 1956 թ.

ՆՐԳԻ-ԳԱՐՈՒ ԱՆՍԱՄԲԼԻ ՀԱՄԱՐ

1. «Կոլխոզական» — 1947 թ.
2. «Առատություն» — 1948 թ.
3. «Երկաթուղային սյուիտ» — 1952 թ.